ԻՆԵՍԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Ակադեմիական երգեցողության բաժնի, մագիստրոսական II կուրս

Ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լ. Կ. Եփրեմյան

ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Ներածություն

2020 թ. մարտ ամսին համաճարակի տարածման պատճառով ՀՀ-ում որոշում ընդունվեց այն մասին, որ կրթական հաստատություններն անցնում են աշխատանքի հեռավար կազմակերպման ձևաչափին: Այդ փուլում ինֆորմացիոն տիրույթում ակտիվ քննարկումներ էին ծավալվել այն թեմայի շուրջ, թե արդյո՞ք պատրաստ է մեր դպրոցական և ԲՈՒՀ-ական կրթական համակարգն այս անցումային շրջանին: Անակնկալ փոփոխությունների հետևանքով առաջացած դժվարությունների հետ բախվեցին կրթական գործընթացի բոլոր մասնակիցները: Արդյունքում առավել ծանրաբեռնված դարձավ դասախոսական անձնակազմի աշխատանքը, քանի որ իրենք ստիպված էին կարճ ժամկետներում հարմարվել և տեղափոխել իրենց համար սովորական դասերն առցանց, վիրտուալ աշխարհ: Ծագեցին տարբեր բնույթի խնդիրներ, որոնց թվում էր անգամ մեր ժամանակների համար պարզ համակարգիչների և հեռախոսների բացակայությունը աշակերտ/ուսանողների և դասախոսների մոտ և այլ խնդիրներ: Դրա հետ մեկտեղ, բոլոր դասախոսները չէ, որ պատրաստ եղան մշակելու աշակերտների/ուսանողների հետ հաղորդակցման նոր մոդելներ և անցկացնելու հեռավար դասերը տարբեր միջոցներով:

Հասկանալու համար, թե ինչպես են հարմարվել ԵՊԿ-ի դասախոսները աշխատանքային այս նոր ձևաչափին և ինչ տեսակի դժվարություններ են նրանց մոտ առաջացել աշխատանքի ընթացքում, անցկացվեց փոքր հետազոտություն-հարցում: Հարցման հիմնական նպատակներն էին՝

- Գնահատել առցանց հարթակներում դասախոսների նախկին և ներկա աշխատանքային փորձը:

- Բացահայտել առավել հաճախ օգտագործվող ծրագրերը և հարթակները հեռավար դասավանդման ընթացքում:

- Պարզել ամենատարածված խնդիրները, որոնք ծագում են հեռավար դասերի անցկացման ժամանակ:

- Պարզել հեռավար դասավանդման ինչպես թերությունները, այնպես էլ առավելությունները դասախոսների տեսանկյունից:

Տվյալների հավաքման մեթոդն էր առցանց հարցումը: Այդ նպատակով ստեղծվեց Google form ձևաչափով հարցաշարը, որ սոցիալական ցանցի (Facebook), էլ. փոստի և մարդկանց միջոցով տարածվեց ԵՊԿ-ի դասախոսական միջավայրում: Հարցաշարի մեջ ներառված էր ութ հարց: Ընդհանուր առմամբ, հարցաթերթիկները լրացրեցին 22 դասախոս-ռեսպոնդենտներ ԵՊԿ-ի տարբեր բաժիններից և ամբիոններից: Հարցումն անցկացվեց դեկտեմբերի 12-22: Աշխատանքում նաև բնութագրված է ՌԴ-ի ԲՈՒՀ-երում և դպրոցներում տիրող իրավիճակը համաճարակի տարածման պայմաններում, ըստ իրենց կողմից հրապարակած տվյալների:

ԳԼՈՒԽ 1

Հարցաթերթիկի մաս կազմող հարցերը

Հարցաթերթիկում հարցերը տրված էին հետևյալ հերթականությամբ.

Ա) Հարց. 1. Ձեր տարիքային խումբը

Պատասխանելու համար ռեսպոնդենտը պետք է նշեր արդեն պատրաստ մի քանի պատասխաններից մեկը: Պարզվեց, որ հարցման մասնակիցների 45.5% (10 հոգի) ընդգրկված են «50 և ավելի բարձր» տարիքային խմբում, 36.4% (8 հոգի)՝ 35-50 տարեկանների խմբում, 13.6 % (3 հոգի)՝ 25-35 տարեկանների խմբում, և միայն մեկ ռեսպոնդենտ (4.5 %) 25 տարեկանից ցածր էր (Նկ. 1):



Բ) Հարց 2. Արդյո՞ք դասավանդել եք առցանց կամ իրականացրել եք հեռավար դասավանդում միչև համաճարակի տարածումը:

---

* Զեկուցումն ընթերցվել է ԵՊԿ-100-ամյակին նվիրված ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովի շրջանակներում:
Երաշխավորվել է հրատարակության ԵՊԿ խմբագրական խորհրդի առաջարկով:

Մասնակիցների մեծ մասն այս հարցին բացասական պատասխան են տվել (54.5% - 12 հոգի), 22.7 % (5 հոգի)- պատասխանեց, որ դասավանդել է առցանց մինչև համաճարակի տարածումը, իսկ 22.7 %-ը՝ հազվադեպ (Նկ. 2):



Մանրամասն հետազոտությունը ցույց տվեց, որ 50 և բարձր տարիքային խմբի մասնակիցների 60% (6 մարդ) չեն ունեցել երբևէ առցանց դասավանդման փորձ մինչև համաճարակը: Այս տարիքային խմբի մասնակիցների 20%-ը դասավանդել են առնցանց նախկինում էլ, իսկ մյուս 20%-ը դասավանդել են հազվադեպ:

35-50 տարեկան մասնակիցների 50 %-ը չեն դասավանդել առցանց մինչև համաճարակի տարածումը, 25%-ը դրական են պատասխանել, իսկ մյուս 25%-ը՝ հազվադեպ:

25-35 տարեկան մասնակիցների 33.3% (1 հոգի) չեն ունեցել նախկինում հեռավար դասավանդման փորձ, 33.3% -ը դասավանդել են առցանց, և մյուս 33.3%-ը դասավանդել են հազվադեպ:

Միակ մասնակիցը, որ ընգրկվել էր 25-ից ցածր տարիքային խմբում դասավանդել էր հեռավար անցյալում նույնպես:

Գ) Հարց 3. Ո՞ր ծրագիրը կամ օնլայն հարթակն եք օգտագործում առցանց դասավանդման ընթացքում

Ամենահաճախ օգտագործվող ծրագրերն էին Google meet-ը (13 հոգի) և Zoom-ը (12 հոգի), դրանց հաջորդում էր Facebook Messenger-ը (10 հոգի), ավելի քիչ օգտագործվող ծրագիր էր Viber-ը (4 հոգի): Ընդամենը մեկական մասնակից նշեցին skype-ը, էլ. փոստը և WhatsApp-ը:

Հետաքրքիր է, որ շատ դեպքերում դասախոսները նշել են մի քանի ծրագրի տարբերակ միաժամանակ, կամ, օրինակ, նշել են, որ օգտագործում են բացի Viber-ից և Skype-ից բոլոր ծրագրերը: 7 դասախոս նշել են, որ օգտագործում են միայն google meet ծրագիրը, իսկ 4՝ միայն Zoom: Սա իհարկե պայմանավորված է Կոնսերվատորիայում ընդհանուր, կենտրոնացված համակարգի՝ google classroom-ի առկայությամբ, քանի որ բոլոր կոնսերվատորիական օնլայն համակարգում գրանցված դասախոսները և ուսանողները հանդիպում են հենց այս հարթակի վրա և հետևաբար օգտագործում են նույն Google Meet ծրագիրը: Ռեսպոնդենտներից մեկի պատասխանը, որ նախորդ կիսամյակում օգտագործել է Zoom ծրագիրը, իսկ ներկա պահին Google meet-ը հաստատում է այս տեսակետը: Google meet-ը և Zoom-ը իհարկե հիմնականում օգտագործվում են տեսական առարկաներ դասավանդող դասախոսների կողմից, իսկ Viber, Messenger, whatsapp հավելվածները հաճախ օգտագործում են կատարողական արվեստի ամբիոնների, ակադեմիական երգեցողության բաժնի մասնագիտության դասախոսները:

Դ) Հարց. 4. Փոխվե՞լ է արդյոք Ձեր աշխատանքային ծանրաբեռնվածությունը այն բանից հետո, երբ դասավանդումը տեղափոխվեց վիրտուալ աշխարհ:

Ռեսպոնդենտների 63.6%-ը պատասխանել է, որ իրենց աշխատանքային ծանրաբեռնվածությունն ընդհանուր առմամբ աճել է, իսկ 31.8 %-ը՝ որ աշխատանքային ծանրաբեռնվածությունը չի փոխվել: Այսինքն, չկա թերևս որևիցէ մեկը, որ նշած լինի, թե ծանրաբեռնվածությունը նվազել է (Նկ. 3):



50 և ավելի բարձր տարիքի ռեսպոնդենտների ուղիղ կեսը (50%) պատասխանել են, որ իրենց համար աճել է ծանրաբեռնվածությունը, իսկ մյուս կեսը՝ չի փոխվել:

Հետաքրքիր են մյուս՝ 35-50 տարիքային խմբի արդյունքները: Ութ մասնակցից յոթը նշել են, որ իրենց ծանրաբեռնվածությունն աճել է, և միայն մեկ հոգի նշել է, որ «չի փոխվել»: Բնականաբար, ավելի է աճել կատարողական արվեստի և վոկալ բաժիններում դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունը:

Ե) Հարց. 5. Կարո՞ղ եք թվարկել այն հիմնական խնդիրները, որոնց հետ բախվել եք առցանց դասավանդման ժամանակ:

Դասախոսները հնարավորություն ունեին հարցին պատասխանել ազատ և մի քանի տողով ներկայացնել իրենց անհատական փորձը: Այդ պատասխանների ամփոփմամբ, հնարավոր եղավ առանձնացնել և դասակարգել առավել հաճախ նշվող խնդիրները և դժվարությունները:

Հիմնական խնդիրներն են՝

1. Տեխնիկական խնդիրներ, կապի խնդիր

Յոթ հոգի նշել են, որ հիմնական խնդիրն իրենց համար եղել են տեխնիկական դժվարությունները: Նշվել են տեխնիկական բարդություններ՝ կապված միանգամից երկու գործողություն կատարելու անհնարինության հետ (օրինակ, հնարավոր չէ միանգամից և՛ ձայնագրություն միացնել և՛ նոտաներ ցույց տալ): Մեկ ռեսպոնդենտ գրում է. «Երաժշտական ոլորտում տեխնիկական խնդիրներ են առաջանում ձայնի հետ կապված»:

Ավելի ավագ սերունդը ներկայացնող հարցման մասնակցի խոսքերով («50 և ավելի բարձր» խումբ) բավականին դժվար էր Zoom, Google Classroom ծրագրերին տիրապետելու գործընթացը:

2. Մասնագիտական առարկայի դասավանդման հետ կապված դժվարություններ:

Այս խմբի դժվարությունները հիմնականում նշվել են կատարողական արվեստի, ակադեմիական երգեցողության հետ առնչվող բաժինների դասախոսների կողմից:

Այսպես, օրինակ, ռեսպոնդենտներից մեկը գրում է. «Կատարողական արվեստն անթույլատրելի է դասավանդել առցանց տարբերակով: Կատարողական ասպարեզը լիարժեք է միայն բնական շփման ոլորտում»:

- «Անհամատեղելի է առցանց դասավանդումը մեր ասպարեզի հետ... վոկալի՝ հատկապես»:

- «Գործնականում շատ անհարմար է կատարող երաժիշտների հետ պարապելն առցանց»:

- «Բախվել եմ մասնագիտական խնդիրների և սահմանափակումների հետ»:

3. Ուսանողների, լսարանի հետ անմիջական, կենդանի կոնտակտի, հաղորդակցման և ուշադրության խնդիր:

Որոշ դեպքերում դժվարություն է հանդիսացել ուսանողների ուշադրությունը պահելու և լսարանի ուշադրության կենտրոնացման խնդիրը:

- «Հաճախ դժվար է հետևել ուսանողների ռեակցիային մանավանդ, երբ ուսանողները չեն միացնում տեսախցիկը»:

- «Ուսանողները խուսափում են հիմնականում վիդեոկամերան միացնելուց, ինչի պատճառով տուժում է դասավանդման պրոցեսում շփման անմիջականությունը»:

- «Կիսատ է դառնում ուսուցումը՝ զրկելով անմիջական շփումից»:

4. Ինտերակտիվ աշխատանքի կազմակեպտման հետ կապված խնդիրներ:

Նշվել է նաև, որ առավել մեծ ջանք և եռանդ է պահանջում ինտերակտիվ աշխատանքը: Մեջբերենք մի քանի պատասխան.

- «Ներկա-բացակա անելու դժվարություն (մտնում և դուրս են գալիս)»:

- «Ավելի մանրամասն, գրավոր արձագանք տալու անհրաժեշտություն»:

- «1) Դասախոսությունը վիզուալացնելու անհրաժեշտություն 2) Գործնական հանձնարարությունների բազայի պակաս»:

- «Գրավոր աշխատանքների ժամանակ ինքնուրույնության վերահսկողության դժվարությունը»:

- «Պրակտիկ աշխատանքների անցկացումը բարդացել է»:

- «Գրատախտակի բացակայություն»:

- «Ուսանողներին կարևոր նյութ թելադրելուց, հնարավոր չէ ստուգել, և ստիպված եմ անընդհատ խնդրել, որ արձագանքեն և հաստատեն իմ ասածը»:

Զ) Հարց. 6. Արդյոք ունե՞ք տեխնիկական միջոցներ/սարքավորում առցանց դասերի լիարժեք անց կացման համար:

22 ռեսպոնդենտից 21 նշել են, որ ունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, և միայն մի հոգի գրել է. «Ոչ, աշխատում եմ միայն հեռախոսով»: Մեկ ուրիշ դասախոս էլ նշել է, որ ունի պլանշետ, որ տրամադրվել է իրեն Կոնսերվատորիայի կողմից (ինտերնետ կապի հետ միասին):

Պետք է նշել, որ մի քանի դեպքում, կրկին կատարողական արվեստի առարկաները դասավանդող դասախոսները տվել են ավելի երկար պատասխաններ, սկսելով հետևյալ կերպ. «Այո ունեմ տեխնիկական միջոցներ, բայց ...»:

- «Լիարժեք չի բավարարում, ունեցած տեխնիկան, որակական չափանիշներին, ուղղակի հնարավորություն է տալիս մինիմալ նախադրյալներ ապահովել կապ հաստատելու համար»:

- «Միևնույնն է, անբնական է լսվում ձայնը, տեխնիկան խաբուսիկ է արտաբերում ձայնը, ձայնի բոլոր նյուանսները: Մեձո ֆորտեն կարող է լսվել կրեշենդո, պիանոն՝ ֆորտե: Ու շատ զգույշ պետք է լինել, ուշադիր»:

- «Միջոցները ոչ մի կերպ չեն նպաստում լիարժեք դաս անցկացնելուն»:

- «Տեխնիկական միջոցներ ունեմ, բայց ոչ մի տեխնիկական սարքավորումներ չեն կարող փոխարինել բնական մարդկային շփումը և գործընթացը»:

Է) Հարց. 7. Բնական է, որ հեռավար դասավանդումն ունի որոշ թերություններ: Ըստ ձեզ, որո՞նք են առցանց դասավանդման առավելությունները, եթե դրանք կան:

Ինը ռեսպոնդենտ նշել են, որ առցանց դասավանդումը չունի որևիցե առավելություն, ասելով, որ ոչինչ չի կարող փոխարինել անմիջական շփումը: Չկան առավելություններ, ծայրից ծայր թերություն է:

Սակայն պատասխանների հիմքի վրա որոշ ընդհանրացումներ անելուց հետո, հնարավոր է առանձնացնել մի քանի առավելություններ. խմբեր՝

1. Ժամանակի խնայողություն և time management-ի համար ավելի մեծ հնարավորություններ

Ըստ հարցման արդյունքների, կարևորվում է ժամանակի խնայողությունը. հնարավոր է ավելի շատ բան հասցնել՝ տնից դեպի աշխատավայր և հետ տեղափոխվելու համար ժամանակի կրճատման շնորհիվ: Դրա հետ մեկտեղ, նշվել է, որ առցանց դասավանդումը հնարավորություն է տալիս որոշ դասերի անցկացման գրաֆիկն առավել ճկուն կազմել:

Տարածության, հեռավորության հաղթահարում.

Շատ մեծ առավելություն է համարվել նաև տարածության հաղթահարումն առցանց դասավանդման հնարավորությունների շնորհիվ: Այսինքն, տարածության բացակայություն մոլորակի մասշտաբներով: Պատասխանների շարքում կարելի է նշել հետևյալները՝

- «Հեռավար դասավանդումը հոյակապ այլընտրանք է՝ հիվանդ կամ քաղաքից դուրս լինելու դեպքում»:

- «Անհասանելի հեռավորության վրա ուսուցման կազմակերպումը՝ տարբեր երկրներում օրինակ...»:

- «Ճանապարհ պետք չէ կտրել ցուրտ եղանակին»:

Ֆինանսական առավելություններ

Քիչ կարևոր չեն նաև ֆինասական խնդիրները:

- «Ֆինանսական որոշակի հարցեր դուրս են գալիս (ճանապարհածախս)»:

Այլ առավելություններ

Ռեսպոնդենտների կողմից նշվել են մի շարք այլ յուրահատուկ, միմյանց չկրկնող առավելություններ.

- «Լսարանի միավորման նոր որակ, վարքի որոշ, ավելի մեծ ազատություն»:

- «Նոր սերնդի հետ հաղորդակցվել իր լեզվով (ձևի առումով)»:

- «Առավելություն է ինքնամեկուսացման հնարավորությունը»:

- «Առավելություն չկա, պարզապես միակ առավելությունն այն է, որ երգիչը, երաժիշտը ֆորմայից չի ընկնում»:

- «Կնշեմ թերևս մեկը՝ ինքնուրույնություն է ձևավորում ուսանողի մեջ»:

- «Ուսանողների լռությունը՝ կարգապահության իմաստով»:

- «Իմ գրականությունը ձեռքիս տակ է լինում այս պարագայում»:

Ը) Հարց. 8. Ձեր կարծիքով, հնարավո՞ր է ընդհանրապես դասավանդել Ձեր մասնագիտական առարկան առցանց: Եթե ոչ, ապա հնարավո՞ր է բացատրել՝ ինչու:

Տասը հոգի պատասխանել են, որ, այո, հնարավոր է դասավանդել իրենց մասնագիտական առարկան առցանց: Միանգամայն հնարավոր է, եթե կան լավ պայմաններ, սակայն կենդանի շփումը, ամեն դեպքում, նախընտրելի է:

Մեկ դեպքում նշվում է, որ հնարավոր է, բայց ցանկալի չէ: Երիտասարդ դասախոս-ռեսպոնդենտներից մեկը նշել է հեռավար դասերի կասկածելի արդյունավետության խնդիրը, նշելով. «Առցանց հնարավոր է դասավանդել ամեն ինչ, սակայն շատ կասկածելի արդյունավետությամբ»:

Մյուս տասը ռեսպոնդենտները տվել են միանշանակ բացասական պատասխան այս հարցին և մի քանի դեպքում անգամ բացատրել են պատճառները: Օրինակ՝ նշելով, որ նեղ մասնագիտական նրբություններ կան, որոնք հնարավոր չէ փոխանցել առցանց, որ կան բաներ, որ անմիջական շփում են պահանջում ուսանողի հետ և ցանկալի չէ պարապել առցանց:

Ինչպես և նախորդ դեպքերում, առանձնանում են կատարողական արվեստի առարկաները դասավանդող մասնագետները: Այս դեպքում հստակ հիմնավորվում է, որ ո՛չ, արվեստը չեն դասավանդում առցանց: Նշվում է նաև, որ առարկան ունի երկու լիիրավ կարևոր բաղադրիչ՝ տեսական մաս և պրակտիկա, որը պարտադիր պետք է անցկացնել բեմում, զգալով դահլիճի և հանդիսատեսի շունչը:

Նույն պատկերն է ակադեմիական վոկալ դասավանդող դասախոսների մոտ.

- «Ձայնային խնդիրներ են առաջ գալիս (ձայնի երանգ), բանավոր ներկայացնելուց հետո, անհրաժեշտ են գործնական աշխատանքներ, որոնք առցանց հնարավոր չէ իրականացնել մանավանդ նոր ընդունված ուսանողների դեպքում»:

- «Ոչ՛, Վոկալի տեխնիկան այլ է... պիտի ցույց տաս... տեսնես... շոշափես... (շունչ, բերանի բացվածք, հենքը... և այլն) առցանց անհնար է... ու շատ ուրիշ թերություններ (կապի հետ կապված, ձայնի փոփոխության և այլն)»:

- «Իմ մասնագիտական առարկան իրենով արդեն կենդանի տեսակ է երաժշտական աշխարհում, մարդու գործիքն իր մեջ: Առցանց աշխատելը միայն այն դեպքում է որոշակի փրկություն, երբ երգիչը պահպանում է իր երգչային ֆորման: Շատ ավելի ճիշտ եմ համարում դասարանում աշխատելը, որտեղ և շունչն ես վերահսկում, ձայնի գույները ավելի հստակ լսելի են ու ձայնի մեջ հավասարությունը, ֆորտեն, պիանոն, այդ բոլոր նյուանսներն ավելի կարողանում ես ճիշտ հասկանալ և աշխատել»:

Երկու հոգի տարբեր տարիքային խմբերից տվել են շատ երկար պատասխաններ և տարբերվող բացատրություններ այս հարցին.

- «Տեսականորեն, որոշ կոմպրոմիսների և համապատասխան ծրագրային և տեխնիկական բարձրակարգ սարքավորումների առկայության դեպքում այո, բայց միայն համեմատաբար կարճ ժամանակահատվածում, բայց ցավոք տեխնիկական խնդիրների և մի շարք այլ սահմանափակումների պատճառով, գործնականում կիրառել դա մշտական հիմունքներով անհնար է»:

- «Իմ առարկան հեռավար դասավանդման սկզբունքներին միանգամայն կհամապատասխաներ, եթե դպրոցի ուսուցիչներն էլ նույն հարթակներում աշխատեին և հնարավոր լիներ միանալ իրենց դասերին, բայց այս իրավիճակում լիարժեք լինում է այն դեպքում, երբ դպրոցներն աշխատում են, չնայած ինտերնետի ընձեռնած հնարավորություններն էլ իրենց առավելությունն ունեն, քանի որ կարողանում ենք «ներկա գտնվել» աշխարհահռչակ երաժիշտների վարպետաց դասերին և խոսել կատարողական դպրոցների, դասավանդման համընդհանուր խնդիրների շուրջ, ինչը երբեմն կարող է նույնիսկ ավելի օգտակար լինել»:

ԳԼՈՒԽ Ի

Հեռավար դասավանդման խնդիրները Ռուսաստանի Դաշնությունում համաճարակի պայմաններում:

Ա) Հեռավար դասավանդումը ՌԴ-ում դասախոսների աչքերով:

2020 թ. մարտ-ապրիլ ամիսներին ՌԴ Ազգային Հետազոտական Համալսարանի Տնտեսագիտության Բարձրագույն Դպրոցի նախաձեռնությամբ սոցիոլոգիական հետազոտություն անցկացվեց «Դեպի հեռավար ուսուցում անցման խնդիրները ՌԴ-ում ուսուցիչների աչքերով» թեմայով: Այդ աշխատանքի նպատակն էր՝ պարզել այն բոլոր դժվարությունները և խնդիրները, որոնց հետ բախվել են ուսուցիչները այդ շրջանում (այս հարցումը հիմնականում անցկացվել էր Ռուսաստանի մեծ/փոքր քաղաքների և գյուղերի դպրոցներում): Հարցմանը մասնակցել են 22.600 ուսուցիչ երկրի 75 տարածաշրջաններից:

Այսպես, հիմնվելով սոցիոլոգիական հարցումների արդյունքների վրա, հետազոտողները եկան հետևյալ եզրակացության (1. էջ 40-46).

1. Դասախոսների 64%-ը պատասխանել են, որ արդեն իսկ ունեցել են առցանց հարթակների օգտագործման փորձ մինչև համավարակի տարածումը: Դեպի հեռավար դասավանդումը անցումային փուլում այդ մարդկանց քանակն աճել է 64%-ից մինչև 85%: Առավել հաճախ օգտագործվող հարթակներն էին **чи.ру, Российская электронная школа, ЯКласс, Яндекс. Учебник** *հարթակները: Հաճախ ուսուցիչներն ընտրում են իրենց համար առավել հարմար ծրագրերը կամ հարթակները: Ուսուցիչների 26%-ը կենտրոնացված ընտրում են ամբողջ դպրոցի շրջանակում մեկ կամ մի քանի հարթակ:*

2. Խնդիրները, որոնց հետ բախվել են դասատուները հեռավար դասավանդման ժամանակ ներառում են՝ ա) տեխնիկական խնդիրները (նաև աշակերտների մոտ); բ) վիդեո հարթակի կամ ծրագրի աշխատանքի ընդհատումը դասի ժամանակ համակարգի ծանրաբեռնվածության պատճառով; գ) Դպրոցների պարագայում նաև նշվել է այն հանգամանքը, որ աշակերտներն ինքնուրույն դժվարանում են միանալ դասին:

3. Ուսուցիչների 84%-ը համարում են, որ իրենց ծանրաբեռնվածությունն աճել է հեռավար դասավանդման անցնելուց հետո: Դա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ դասախոսները ստիպված էին արագ յուրացնել դասավանդման նոր ձևերը, պետք էր ուրիշ կերպ պատրաստվել պարապմունքներին, խախտվել են դասերի անցկացման ավանդական պրակտիկաները և գործընկերների հետ դպրոցում անմիջական համագործակցությունը: Բացի դրանից, ոչ բոլորը գիտեն և կարող են օգտվել բոլոր հնարավորություններից, որոնք ընձեռում են կրթական առցանց հարթակները և ծրագրերը:

4. Դասատուների 84%-ը հայտնել են, որ ունեն տեխնիկական միջոցներ աշխատելու համար: Մինչդեռ դպրոցների աշակերտների միայն 38%-ը ունեն հնարավորություն տնային աշխատանք կատարելու առցանց հարթակներում:

Ուսուցիչների կողմից նշվել են նաև հետևյալ խնդիրները. անհնար է որոշ առարկաներ դասավանդել առցանց (երաժշտություն, ֆիզկուլտուրա, հոգեբանություն, լոգոպեդիա), դասախոսները չեն հասկանում, թե ինչպես կարելի է պարապել, առանց աշակերտների հետ անձնական կոնտակտի:

ՌԴ-ում իրավիճակն ավելի լավատեսական է, քան այդ մասին խոսվում էր տեղեկատվական դաշտում սկզբնական փուլում: Ռիսկի գոտում են գյուղական համայնքների դպրոցները:

Ռուսաստանում շեշտակի անցումը դեպի հեռավար ուսուցում հնարավոր եղավ շնորհիվ ՌԴ ԲՈՒՀ-երում հեռավար կրթական տեխնոլոգիաների ստեղծման և օգտագործման փորձի, որ կուտակվել էր սկսած դեռևս 1990-ականների կեսից, երբ հաստատվեց հեռավար ուսուցման Կոնցեպցիան և սկսվեցին այս բնագավառում փորձերը (2. էջ 5-18): Այն հետազոտությունների մեջ, որոնցում վերլուծվում էին այդ գործընթացները նշվում էր, որ հեռավար տեխնոլոգիաները պետք է դիտարկվեն որպես արդյունավետ լրացում ավանդաբար օգտագործվողներին, առանց փոխարինելու մնացած ուսուցման մեթոդները և տեսակները (3. էջ 56-66):

Մեկ այլ հետազոտություն վերաբերում էր համաճարակի շրջանում ՌԴ ԲՈՒՀերի հիմնախնդիրներին և հավանական ռիսկերին դեպի հեռավար դասավանդում անցման պայմաններում (4.):

Ըստ այդ հետազոտության արդյունքների, առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները և լուծումները՝

Կրթության բնագավառում անհավասարության աճի ռիսկ, որ ավելի է ուժեղանում թվային անհավասարության ազդեցության տակ:

Ըստ ՌԴ Գիտության և բարձրագույն կրթության նախարարության, Ռուսաստանի ԲՈՒՀերի 60%-ը բարեհաջող անցել են դասերի հեռավար անցկացման ձևին, 27%-ը պարբերաբար բախվում էին խնդիրների հետ, իսկ 10%-ը՝ չունեին բավարար կամ ընդհանրապես չունեին անհրաժեշտ ենթակառուցվածք կրթության թվայնացման համար: ԲՈՒՀերի տեխնիկական հնարավորությունների անհավասարությունը վատթարացավ նաև դասախոսների և ուսանողների անձնական տեխնիկական և կենցաղային հնարավորությունների անհավասարությամբ, որոնցից կախված է կրթական ռեսուրսների մատչելիությունը և ուսումնական գործընթացի որակը:

2020 թ. ապրիլին ՌԴ Նախագահական Ակադեմիայի կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումը 35.000 դասախոսների շրջանում պարզեց, որ «...ներկա կտրուկ անցումը դեպի հեռավար կրթություն դժգոհություն է առաջացնում դասախոսների մոտ, ինչը հիմնականում կապված է ոչ միայն որակավորման աստիճանի հետ, այլ կյանքի սովորական կենսակարգի խախտման հետ, աշխատանքի վայրի արդեն այլ ընկալման և դասավանդման այլ անհատական մոտեցումների հետ» (5. էջ 72-81): Սակայն դասախոսների իրազեկության պակասի խնդիրը ինչ-որ չափով հաջողվեց լուծել համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում նաև ուսանողների աջակցությամբ, օրինակ, թվային «կիբեր-կամավորների» (Հեռավոր Արևելյան դաշնային համալսարան) կամ «թվային կամավորների» (Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարան, «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» Ազգային հետազոտական համալսարան), «թվային կոնսուլտանտների» (Ֆինանսների համալսարան): Ստեղծված իրավիճակում ելքերից մեկը նաև նոր մագիստրոսական ծրագրերի բացումն էր, որոնք կապված էին «թվային դասավանդման» հետ (Սանկտ-Պետերբուրգի Պոլիտեխնիկական համալսարան):

2. Հեռավար դասավանդման ժամանակ ծանրաբեռնվածության զգալի աճի ռիսկ, ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար, ինքը բացասաբար է անդրադառնում իրենց սոցիալ-հոգեբանական ինքնազգացողության և առողջության վրա:

Մոսկվայի ԲՈՒՀերի ավելի քան 750 ուսանողների հարցումները, որ անց են կացվել 2020 թ. Պլեխանովի անվան Տնտեսագիտական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կողմից, ցույց են տվել հետևյալը.

- Դեպի հեռավար ուսուցում անցման ընթացքում հարցմանը պատասխանողների մեծամասնությունը (81%) բավարար չէին համարում հեռավար դասերի որակը, ինչն ազդում էր իր հերթին իրենց ֆիզիկական և հոգեբանական վիճակների վրա (74%-ը «հոգնել էին էլեկտրոնային ինֆորմացիոն հոսքից»):

- Հեռավար ռեժիմով դասավանդման համար աշխատանքային բավարար փորձի բացակայությունն սկզբնական շրջանում և բազմաթիվ առցանց հարթակների օգտագործումը հանգեցրեցին դասերի անցկացման տարատեսակ ֆորմատների առաջացմանը («ամեն դասախոս յուրովի էր անց կացնում իր դասերը») և կրթական գործընթացի մասնակիցների միջև փոխառնչության ապահովման դանդաղեցմանը:

- Առցանց ուսուցման պարագայում ավելի շատ ժամանակ է ծախսվում (15-20 րոպե ավելի) նախապատրաստման և առաջադրանքների կատարման համար օֆլայն ռեժիմի համեմատ: Արդյունքում, ռեսպոնդենտների 60%-ը «մեծ ծանրաբեռնվածություն էին զգում»:

- Ինքնամեկուսացումը զգալիորեն նվազեցրեց առկա կոմունիկացիաների հնարավորությունը, դասապրոցեսին անմիջապես մասնակցելու հնարավորությունը, ինչը հանգեցրեց ուսանողների մոտ հոգեբանական լարվածության: Դասախոսների աշխատանքի ծավալի մեծացումը, ազատ ժամանակի պակասը ծանրաբեռնվածության պահպանվող նորմատիվների պարագայում, հանգեցրեցին դժգոհության և քիչ բավարարվածության իրենց իսկ աշխա-

տանքով:

ՆԱՖԻ վերլուծական կենտրոնի տվյալներով, դրպրոցների դասատուների և ԲՈՒՀ-երի դասախոսների ավելի քան 70%-ը հայտնել են աճող ծանրաբեռնվածության մասի, 26%-ը բողոքեցին դեպի առնցանց ուսուցում անցման անբավարար կազմակերպումից և ուսման գործընթացի որակի կորստից (6.):

Դասախոսների 34%-ը տանը չունի տեղ դասի կոմֆորտ և լիարժեք անց կացման համար, ինչն ավելացնում է սթրեսն ուսման գործընթացի կազմակերպման ընթացքում:

Դասավանդման հեռավար ֆորմատին անցնելուց հետո դասախոսների մեծամասնությունն արդեն ունեն ավելի քիչ ազատ ժամանակ (85,7 %), արդեն ձևավորվեց պատկերացումն «աշխատանքային ծանրաբեռնվածության աճի» մասին: Արդյունքում, դասախոսների 62,2%-ը չեն համարում հեռավար դասավանդման ֆորմատը հարմար իրենց համար, մինչդեռ 59,9 %-ը՝ չեն համարում հեռավար ուսուցման ֆորմատը հարմար ուսանողների համար: Ընդհանուր առմամբ, դասախոսների մեծամասնությունը (87, 8%) գտնում է, որ իրենց դասերը պետք է պարտադիր անցկացվեն առկա (7. էջ 36-44):

Առցանց կրթության տարածման պայմաններում կրթության որակի անկման ռիսկ:

Պետք է նշել, որ անկախ համաճարակից առցանց կրթության զարգացումը հանդիսանում է գլոբալ հիմնական տրենդերից մեկը, որն իր մեջ ներառում է ինչպես հնարավորություններ, այնպես էլ վտանգներ [8]: Բացի ժամանակային, աշխարհագրական, ֆինանսական մատչելիության, առցանց կրթության առավելությունների շարքին է վերաբերում անհատականացման, ըստ բովանդակության, նյութի ներկայացման ձևի և ատեստացիայի կրթության տարբերակայնության պոտենցիալ բարձր աստիճանը:

4. Ուսման վճարի բարձրացման ռիսկը, որ կապված է հեռավար և առցանց կրթության կազմակերպման ծախսերի աճի հետ:

Բոլոր կրթական ծրագրերը կարող են բաժանվել երեք խմբի. 1-ինը, երբ կա դասախոսի և սովորողի միջև փոխազդեցության բարձր աստիճան (դրանք հիմնականում ստեղծագործ մասնագիտություններն են), 2-րդը, երբ այդ փոխազդեցության աստիճանը ցածր է, բայց ուսուցման համար անհրաժեշտ է թանկարժեք սարքավորում և տեխնիկա (բժշկական և ինժիներական մասնագիտացումներ), երրորդը, երբ չկա անհրաժեշտություն բարձրակարգ սարքավորումների (օրինակ, տնտեսագիտական մասնագիտացումներ): Այսպիսով, ավելի խոցելի են առաջին և երկրորդ խմբերը, քանի որ այդ պարագայում կրթությունը «ավելի թանկանում է»:

Ակնհայտ է, որ հեռավար կրթությունը ոչ մի դեպքում չի փոխարինի առկա, դասական կենդանի կրթությունը, բայց, ամենայն հավանականությամբ, կիրականցվի մեծ մասշտաբներով անցում դեպի խառն ուսուցում, որում թվային ֆորմատները կգտնեն իրենց տեղը տարբեր ձևերով: Էքսպերտները նշում են, որ համաճարակի պատճառով դեպի առցանց ուսուցում անցումն օգնեց դասախոսներին, ուսանողներին և ղեկավարներին տեսնել նոր հնարավորություններ և ստանալ նոր դրական փորձ: Եվ դա կբերի իր դրական արդյունքները ԲՈՒՀի համար: Ամենագլխավորը, դասախոսների ավագ սերունդը հաղթահարեց թվային տեխնոլոգիաների պատնեշը, որ իրենք չէին կարողանում հաղթահարել այլ իրավիճակում: Շնորհիվ այդ սթրես-թեստի հրստակ հասկանալի դարձավ, թե ուսումնական գործընթացի, որ բաղադրիչները կարող են անցկացվել առցանց, իսկ որոնք են, որ ունեն առկա կոնտակտի կարիք: Փորձը ցույց է տալիս, որ հեռավար տեխնոլոգիաները որոշակիորեն կգրավեն իրենց տեղը ժամանակակից կրթական ծրագրերում: Կարևորը ճիշտ հավասարակշռությունն է ավանդական առկա և հեռավար ֆորմատների միջև:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է նշել, որ չնայած ՀՀ առանձին ԲՈՒՀ-երում անցկացված դեպի հեռավար ուսուցում անցման հետ կապված հարցումների, ամեն դեպքում, այդ հացումները և հետազոտություններն արվում են շատ փոքր մասշտաբով՝ համեմատ ՌԴ-ում կատարված համակողմանի և մեծածավալ հետազոտությունների այդ բնագավառում:

Չնայած դրան, հետազոտությունները երկու երկրում էլ բացահայտում են, որ իրավիճակը դեպի հեռավար ուսուցում անցման հետ կապված շատ ավելի լավատեսական է, քան այն ներկայացվում էր տեղեկատվական դաշտում առաջին օրերին, երբ հայտարարվեց համաճարակի պատճառով օնլայն դասավանդման մասին:

Ամեն դեպքում ռիսկի գոտում էին ՌԴ-ում (ենթադրաբար նաև ՀՀ-ում) գյուղական համայնքների դպրոցները, քանի որ իրենց համար, բնականաբար, ավելի դժվարահասանելի են տեխնիկական միջոցները:

Ընդհանուր առմամբ երկու երկրում էլ առցանց դասավանդման հետ կապված խնդիրները համընկնում են (տեխնիկական դժվարություններ, ծանրաբեռնվածություն, որոշ առարկաների առցանց անցկացման անհնարինություն, փորձի պակաս, ավելորդ սթրես և այլն), սակայն ՌԴ-ը շատ ավելի նախապատրաստված էր այդ անցմանը դեպի հեռավար ուսուցում, քան ՀՀ-ը և ուներ համապատասխան հիմքեր: Հուսանք, որ հետագա ավելի մասնագիտական և մեծածավալ հետազոտությունները ՀՀ-ում կբացահայտեն հետաքրքիր և համակողմանի տվյալներ:

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Андреев А. А.,* Дистанционное обучение и дистанционные об - разовательные технологии., //Открытое образование, N 5 (100) 2013. *Andreev A. A.,* Distantzionnoe obuchenie i dis- tantzionnyie obrazovatel'nye tekhnologii., //Otkrytoe obrazo- vanie, N 5(100)2013.
2. *Гришин В. И., Домащенко Д. В., Константинова Л. В., Кошкин А. П., Устюжанина Е.В., Штыхно Д. А., Шубенкова Е. В.*, Жизнь после пандемии: экономические и социальные последствия., //Вестник Российского экономического университета имени Г. В. Плеханова, 2020 N 3. *Grishin V. I., Domashchenko D. V., Konstantinova L. V., Koshkin A. P., Ustyuzhanina E. V., Shtykhno D. A., Shubenkova E. V.,* Zhizn' posle pandemii: ekonomicheskie i sotzialnye posledstviya., //Vestnik Rossijskogo ekonomicheskogo universiteta imeni G. V. Plekhanova, 2020 N 3.
3. *Малиатаки В. В., Киричек К. А., Вендина А. А.,* 2020, Дис танционные образовательные технологии как современное средство реализации активных и интерактивных методов обучения при организации самостоятельной работы студентов., //Открытое образование, том 24 (3), 2020. *Maliataki V. V., Kirichek K. A., Vendina A. A., 2020,* Distantzionnye obrazo- vatel'nye tekhnologii kak sovremennoe sredstvo realizatzii aktivnykh i interaktivnykh metodov obucheniya pri organizatzii samostoyatel'noj raboty studentov., //Otkrytoe obrazovanie, tom 24 (3), 2020.
4. *Сапрыкина Д. И., Волохович А. А.,* «Проблемы перехода на дистанционное обучение в Российской Федерации глазами учителей», Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Институт образования, Серия «Факты образования» N 4 (29), М., 2020. *Saprykina D. I., Volokhovich A. A.,* "Problemy perekhoda na distantzionnoe obuchenie v Rossijskoj Federatzii glazami uchitelej", Natzionalnyj issledovatel'skij universitet "Vysshaya shkola ekonomiki", Institut obrazovaniya, Seriya "Fakty obrazovaniya" N 4 (29), M., 2020.
5. *Штыхно Д. А., Константинова Л. В., Гагиев Н. Н.,* «Пере*ход вузов в дистанционный режим в период пандемии: проблемы и возможные риски», Открытое образование, том 24, N 5, М., 2020.* Shtykhno D. A., Konstantinova L. V., Gagiev N. N., *"Perekhod vuzov v distantzionnyj rezhim v period pandemii: problemy i vozmozhnye riski", Otkrytoe obrazovanie, tom 24, N 5, M., 2020.*

Թվային աղբյուրներ

6. Аналитический центр НАФИ. 2020. Система образования ока залась не готова к переходу на дистанционное обучение в условиях пандемии [Электрон. ресурс]. Режим доступа: https: / / nafi. ru / analytics / sistema- obrazovaniya- okazalas -ne- goto- va-k-perekhodu-na-distantsionnoe-obuchenie-v-usloviyakh- pandemi/. (Дата обращения: 04.09.2020). Analiticheskij tzentr NAFI. 2020. Sistema obrazovaniya okazalas' ne gotova k perekho- du na distantzionnoe obuchenie v usloviyakh pandemii [Elektron. resurs]. Rezhim dostupa: https://nafi. ru/analytics/sistema-obra- zovaniya-okazalas-ne-gotova-k-perekhodu-na-distantsionnoe- obuchenie-v-usloviyakh-pandemi/. (Data obrashcheniya: 04.09.2020) .
7. Преподаватели российских ВУЗов о развитии он-лайн среды в условиях пандемии (Электрон. ресурс), https://www.ranepa.ru /documents/2020_14-116_May.pdf (Дата обращения: 04.09.2020) . Prepodavateli rossiyskikh VUZov o razvitii on-layn sredy v usloviyakh pandemii (Elektron. resurs), https://www.ranepa. ru/documents/2020_14-116_May.pdf (Data obrashcheniya: 04.09.2020).

[1] *Сапрыкина Д.И., Волохович А.А.,* «Проблемы перехода на дистанционное обучение в Российской Федерации глазами учителей», Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Институт образования, Серия «Факты образования» N 4 (29), М., 2020. *Saprykina D. I., Volokhovich A. A.,* "Problemy perekhoda na distantzionnoe obuchenie v Rossiyskoj Federatzii glazami uchitelej", Natzional'nyij issledovatel'skij universitet "Vysshaya shkola ekonomiki", Institut obrazovaniya, Seriya "Fakty obrazovaniya" N 4 (29), M., 2020.

[2] *Андреев А. А.,* Дистанционное обучение и дистанционные образовательные технологии., //Открытое образование, N 5 (100), 2013. *Andreev A. A.,* Distantzionnoe obuchenie i distantzionnye obrazovatel'nye tekhnologii., //Otkrytoe obrazovanie, N 5 (100), 2013.

[3] *Малиатаки В.В. Киричек К.А. Вендина А.А.* Дистанционные образовательные технологии как современное средство реализации активных и интерактивных методов обучения при организации самостоятельной работы студентов., //Открытое образование, том 24 (3), стр. 56-66, 2020. *Maliataki V. V., Kirichek K. A., Vendina A. A.,* Distantzionnye obrazovatel'nye tekhnologii kak sovremennoe sredstvo realizatzii aktivnykh i interaktivnykh metodov obucheniya pri organizatzii samostoyatel'noj raboty studentov., //Otkrytoe obrazo- vanie, tom 24 (3), str. 56-66, 2020.

[4] *Штыхно Д. А., Константинова Л. В., Гагиев Н. Н.,* Переход вузов в дистанционный режим в период пандемии: проблемы и возможные риски., //Открытое образование, том 24, N 5, стр. 74-78, 2020. Shtykhno D. A., Konstantinova L. V., Gagiev N. N., Perehod vuzov v distantsionnyiy rezhim v period pandemii: problemyi i voz- mozhnyie riski// Otkryitoe obrazovanie, tom 24, N 5, str. 74-78, 2020.

[5] Преподаватели российских ВУЗов о развитии он-лайн среды в условиях пандемии (Электрон. ресурс), https://www. ranepa.ru/documents/2020_14-116_May.pdf, стр. 36-44, (Дата обращения: 04.09.2020). Prepodavateli rossiyskikh VUZov o razvitii on-layn sredy v usloviyakh pandemii (Elektron. resurs), https: //www.ranepa.ru/documents/2020_14-116_May.pdf, str. 36-44, (Data obrashcheniya: 04.09.2020).

Аналитический центр НАФИ. 2020. Система образования оказалась не готова к переходу на дистанционное обучение в условиях пандемии [Электрон. ресурс], https://nafi.ru/analytics/sistema-obrazovaniya-okazalas-ne-gotova-k-perekhodu-na-distantsionnoe-obuchenie-v-usloviyakh-pandemi/. (Дата обращения: 04.09. 2020). Analiticheskij tzentr NAFI. 2020. Sistema obrazovaniya okazalas' ne gotova k perekhodu na distantzionnoe obuchenie v usloviyakh pandemii [Elektron. resurs],

[6] https://nafi.ru/analytics / sistema-obrazovaniya-okazalas-ne-gotova- k-perekhodu-na-distantsionnoe-obuchenie-v-usloviyakh-pandemi/. (Data obrashcheniya: 04.09.2020).

[7] Преподаватели российских ВУЗов о развитии он-лайн среды в условиях пандемии (Электрон. ресурс), https://www.ranepa.ru/documents/2020_14-116_May.pdf, стр. 36-44, (Дата обращения: 04.09.2020). Prepodavateli rossijskikh VUZov o razvitii on-layn sredy v usloviyakh pandemii (Elektron. resurs), https://www.ranepa.ru/documents/2020_14-116_May.pdf, str. 36-44, (Data obrascheniya: 04.09.2020).

[8] *Гришин В.И.,* et al. Жизнь после пандемии: экономические и социальные последствия., //Вестник Российского экономического университета имени Г. В. Плеханова, 2020, N 3, стр. 518. *Grishin V.I.,* et al. Zhizn' posle pandemii: ekonomicheskie i sotzial'nye posledstviya., //Vestnik Rossijskogo ekonomicheskogo universiteta imeni G. V. Plekhanova, 2020, N 3, str. 5-18.

Բանալի բառեր. *հիմնախնդիրներ, հեռավար ուսուցում, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա:*

Ключевые слова: *проблемы, дистанционное обучение, Ереванская государственная консерватория им. Комитаса.* ***Keywords:***

Problems, Distance Learning, Yerevan State Conservatory after Komitas.

Տեղեկություններ հեղինակի մասին. *ՀՈՎՍԵՓՅԱՆ ԻՆԵՍՍԱ երգչուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագիստրոսական 2-րդ կուրսի ուսանողուհի: Ղեկ.՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լ.Կ. Եփրեմյան:*

Сведения об авторе: *ИНЕССА ОВСЕПЯН певица, студентка 2-го курса магистратуры ЕГК им. Комитаса. Рук. кандидат искусствоведения, доцент Л. К. Епремян.*

Information about the author: *INESSA HOVSEPYAN Singer, second year MA student at the Yerevan State Conservatory after Komitas.*

Резюме

Певица, студентка 2-го курса магистратуры Ереванской государственной консерватории им. Комитаса *Инесса Овсепян. - "Проблемы дистанционного обучения в Ереванской государственной консерватории им. Комитаса".*

С марта 2020 года в Республике Армения из-за распространения ковида было принято решение о переводе вузов на дистанционное обучение. В этот переходный период были активные обсуждения по поводу перехода на дистанционное обучение. Автор приводит несколько доводов на основе социологического опроса, составляет графики на основе ответов как студентов, так и преподавательского состава. Отмечаются также трудности в связи со спецификой музыкального искусства. В нескольких разделах представлены соответствующий анализ и выводы.

Summary

Singer, second year MA student at the Yerevan State Komitas Conservatory *Inessa Hovsepyan. - "Problems of Distance Teaching at the Yerevan Komitas State Conservatory".*

In March 2020, due to the COVID pandemic, the Government of Armenia implemented distance learning in universities. During that transition period, there was an active discussion regarding the introduction of distance learning system. Based on the results of a social science survey, the author provides a number of arguments as well as presents a series of graphs derived from the responses of both students and faculty. The difficulties associated with the area of musical art are also highlighted. The relevant analysis and conclusions are summarized in several chapters.